ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ

ARMENIAN
CHESS FEDERATION

0025, Հայաստան, Երևան, Խանջյան 50,
Հեռ./ֆաքս՝ (374)10-570758
էլ. փոստ՝ info@chessfed.am

50, Khandjian Str., 0025, Yerevan, Armenia
Tel./Fax: (374)10-570758
E-mail: info@chessfed.am

Որոշում № 5
Հայաստանի շախմատային ֆեդերացիայի

ք. Երևան, 13 մարտի 2017 թ.

Հիմք ընդունելով Հայաստանի շախմատային ֆեդերացիայի որակավորման հանձնաժողովի առաջարկությունները Հայաստանի շախմատային ֆեդերացիան որոշում է.

ա. Առաջին կարգ ստանալու համար որակավորման մրցաշարերում անհրաժեշտ է 9 հնարավորից վաստակել 8 միավոր կամ երկու անգամ՝ 9 հնարավորից 7 միավոր: Անդրանիկ Մարգարյանի հուշամրցաշարում, Ջերմուկում անցկացվող Ստեփան Ավագյանի հուշամրցաշարում, Հայաստանի պատանիների կիսաեզրափակիչ և եզրափակիչ մրցաշարերում ոչ երևանաբնակ շախմատիստները առաջին կարգ կարող են ստանալ մեկ անգամ կատարելով առաջին կարգ ստանալու պահանջները:
բ. 4-րդ կարգի որակավորման մրցաշարում 8 հնարավորից 6 միավոր վաստակած շախմատիստին թույլատրել միայն մեկ անգամ մասնակցել 3-րդ կարգի որակավորման մրցաշարի: Սահմանել վերահսկողություն կրկնակի մասնակցության դեպքեր թույլ չտալու համար:
գ. Որևէ այլ կարգի պահանջից կես միավոր պակաս ձեռք բերած շախմատիստներին չթույլատրել պայմանականորեն մասնակցել ավելի բարձր որակավորման մրցաշարի: Բացառություն կատարել միայն աղջիկ մասնակիցների համար, սակայն մասնակցության իրավունքն սահմանափակել մեկ մրցաշարով:
դ. Սահմանել որակավորման մրցաշարերի հետևյալ կարգը.
4-րդ կարգի որակավորման մրցաշար. 8 տուր, մասնակցի կողմից պարտիայի քայլերի գրանցումը պարտադիր չէ, պարտիան անցկացվում է առանց շախմատային ժամացույցի,
3-րդ կարգի որակավորման մրցաշար. 8 տուր, ժամակարգը՝ 1 ժամ յուրաքանչյուր կողմին մինչև պարտիայի ավարտը:Մասնակցի կողմից պարտիայի քայլերի գրանցումը պարտադիր է:
2-րդ և 1-ին կարգերի որակավորման մրցաշարեր. 9 տուր, ժամակարգը՝ 90 րոպե յուրաքանչյուր կողմին մինչև պարտիայի ավարտը: Մասնակցի կողմից պարտիայի քայլերի գրանցումը պարտադիր է:
Երևան քաղաքի բոլոր որակավորման մրցաշարերում մեկ օրում թույլատրվում է անցկացնել միայն մեկ խաղափուլ: Մարզերում անցկացվող մրցաշարերը պետք է տևեն առնվազն երեք օր:
3-րդ, 2-րդ և 1-ին կարգի որակավորման մրցաշարերին թույլ չտալ մասնակցելու այն շախմատիստներին, ովքեր չեն կարողանում գրանցել շախմատային պարտիայի քայլերը:
ե. Սահմանել խառը մրցաշարերում մարզական կարգ լրացնելու չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

Նախագահի առաջին տեղակալ՝ Ս. Լազուտյան